

ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱՂԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ «ՓՈՐՃԻ» ԵՎ
«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ԷԶԵՐՈՒՄ

Մ. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

XIX դ. վերջին քառորդում հայ հրապարակախոսական միտքը մի ան-
գամ չէ, որ անդրադարձել է Բալկանյան երկրների, Հունգարիայի և Զեխոսլո-
վակիայի ժողովուրդների ճակատագրի, նրանց անցած ճանապարհի, պայքա-
րի ու մշակույթի հարցերին։ Եվ այդ հասկանալի է։ Այն բանից հետո, երբ հայ
մտավորականության և ժողովրդի պատրանքները, կապված Արևմտահայաս-
տանում անցկացվելիք բարենորոգումների հետ, իրենց օրհասն են ապրում,
հայկական հարցը դառնում է պարբերական մամուլի ամենահրատապ խնդիրը։
Հայ հրապարակախոսները լուսաբանում են Եվրոպայի ճնշված ժողովուրդների
ազգային-ազատագրական պայքարի պատմությունը. մամուլի էջերում վեր են
հանվում բուլղար և հունգար ժողովուրդների ազատագրական շարժումների
արժանահիշատակ դրվագները, հողվածներ են նվիրվում ազգային լեզվի ու
մշակույթի պահպանման համար շեխ ժողովրդի վարած պայքարի առանձնա-
հատկություններին և այլն։ Դա հայերին քաղաքական ինքնաճանաչության
հասցնելու միջոց էր, բռնակալության դեմ պայքարելու և անկախություն ձեռք
բերելու՝ կամքի մշակման ուսանելի դպրոց։ Ճնշված ժողովուրդների ազատա-
գրական պայքարի թեմատիկան միաժամանակ այլաբանական լեզվի յուրա-
տեսակ բանալի էր, որի օգնությամբ հրապարակախոսները հաղթահարում էին
գրաքննական խոչընդոտները, անց կացնում արևմտահայության ազատագրու-
թյան հետ կապված իրենց խորհրդածությունները, ծրագրերը, հետևություն-
ները։

Եվրոպական ժողովուրդների ազատագրական պայքարի թեմաներից ա-
ռանձնահատուկ հմտությամբ էր օգտվում «Փորձի» և «Արձագանքի» խմբագիր
Աբգար Հովհաննիսյանը։ Եկած «Փորձ» հանդեսի հրատարակության օրերից,
Աբգար Հովհաննիսյանը բազմիցս դիմել է սլավոնական և հունգար ժողովուրդ-
ների ազատագրական պայքարի պրվագներին, դրանք դիտելով իբրև իր օրերի
հայությանն անհրաժեշտ պատմության դասերի ուղագրավ օրինակներ։

«Փորձի» և «Արձագանքի» էջերում նա տպագրել է հունգարական հեղա-
փոխության երգիչ Շանդոր Պետեֆիի 10 բանաստեղծությունները՝ Գեորգ Բար-
խուդարյանի թարգմանությամբ¹։ 1877 թ. ռուս-թուրքական պատերազմի օրե-

¹ «Փորձում» տպագրվել են Պետեֆիի «Երկու ճանապարհորդ», «Եմ խնդրած մահը», «Հայ-
րենիքի մասին», «Երեք սրտի պատմություն» և «Շղթա» բանաստեղծությունները։ «Արձագան-
քում» տպագրվել են՝ «Եմ կինը և իմ սուրբ», «Որդուս ծնունդին», «Երկաթուղի», «Եմ սիրտը»,
«Երջանիկ մարդ» բանաստեղծությունները։

Հիշատակության արժանի է այն փաստը, որ ցարական գրաքննությունը, տնտեսիցիոզու-
թյան պատճառաբանությամբ, 1882-ին մերժել է «Արձագանքի» համար թարգմանված Պետե-
ֆիի «Սեր և ազատություն» բանաստեղծության տպագրությունը։ Այն հրապարակվել է միայն
1897-ին, Գ. Բարխուդարյանի բանաստեղծությունների ժողովածուի մեջ։

րին, Արգար Հովհաննիսյանը «Փորձում» տպագրելու համար գրաքննությանն է ներկայացնում «1848—1849 թթ. պատերազմի ժամանակաշրջանի հունգարական ժողովրդական պոեզիան» հոդվածը, որը ֆրանսիական «Revue des deux Mondes» հանդեսից, ամենայն հավանականությամբ, թարգմանել էր «Փորձի» աշխատակից Ստեփանոս Պալասանյանը: Կովկասյան գրաքննական կոմիտեն հոդվածի տպագրությունն արգելում է հետևյալ պատճառաբանությամբ. «Այլ ժողովուրդների [ապստամբական] ելույթների անալոգիայով հեղինակը նպատակ ունի հայ ընթերցողների մեջ առաջացնել հակապետական գաղափարներ՝ հայերի ապագա քաղաքական վերածնության վերաբերյալ»²: Այս հոդվածի մերժման կապակցությամբ գրաքննական կոմիտեի գլխավոր գրաքննիչի կազմած ղեկուցագիրը և ստեղծված գրագրությունները, որ պահվում են վրացական կենտրոնական պետական արխիվում, հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու հոդվածի մասին, որի բնագիրը մեղ դեռևս չի հաջողվել գտնել: Զեկուցագրում շեշտվում է այն միտքը, թե հոդվածում որոշակի հետաքրքրություն է նկատվում ինչպես հունգարական ազատասիրական և ազգային անկախության գաղափարները դրվատող երգերի, այնպես էլ հունգարական ապստամբության նկատմամբ, որի նպատակն էր տապալել երկրի գերագույն իշխանությունը: Հետաքրքրական է, որ գրաքննիչը հոդվածի հայերեն թարգմանության մեջ հայտնաբերել էր մի շարք շեղումներ բնագրից, որոնք ավելի ցայտուն էին դարձնում խմբագրության համակրանքը հունգարական շարժումների նկատմամբ:

Տարիներ անց, 1892 թ., երբ հայկական հարցը դեռևս իր լուծմանն էր սպասում, Արգար Հովհաննիսյանը, արևուստ բնական, կարողանում է «Արձագանքում» հրապարակել «Փորձի» համար մերժված հոդվածի ոգուն համապատասխան մի այլ հոդված, «Հունգարական ազգային բանաստեղծությունը 1848—49-ի պատերազմի ժամանակ» խորագրով: Խմբագրության արած նշումից երևում է, որ հոդվածը պատկանում է 1889 թ. վախճանված Ստեփանոս Պալասանյանի գրքին³: Առաջին հոդվածից գրաքննիչի կատարած մի շարք մեջբերումների և Պալասանյանի հոդվածի համեմատությունից երևում է, որ դրանք նույնը չեն: Պետք է ենթադրել, որ օտար լեզուների գիտակ Պալասանյանը իր հոդվածի ստեղծագործական մղումն ստանալով նախորդից, հետագայում անձամբ ծանոթացել է հունգարական բանաստեղծությունների ֆրանսիական և գերմանական թարգմանություններին և ստեղծել միանգամայն նոր մի ուսումնասիրություն:

Պատմա-քննական հայացքով մոտենալով խնդրին, Ստ. Պալասանյանը հունգարական ժողովրդական երգերը գնահատում է իբրև այդ ժողովրդի կյանքի նշանակալից էտապների՝ «կենդանի վկաները», որոնք շատ ավելի բան են ասում ապագա սերունդներին, քան պաշտոնական արձանագրությունները և, անհամ, պարբերական մամուլը: Հիրավի, ասում է հոդվածագիրը, «ի՛նչ կարող է ավելի ստույգ, ավելի հավատարիմ լինել, քան երբ մի ժողովուրդ ինքը՝ երգում է յուր կյանքի փառավոր կամ դժբախտ ընդհանրությունը»:

² Այս հարցի մասին առավել հանգամանորեն տե՛ս Մ. Մխիթարյան, «Փորձ» և «Արձագանք» պարբերականները և ցարական գրաքննությունը («Բանբեր Երևանի համալսարանի», 1968, № 3):

³ Տե՛ս «Արձագանք», 1892, № 17—19:

հունգար ժողովրդի պատմությունից «փառավոր կամ դժբախտ ռուպեներ» ընտրելով, հրապարակվող երգերով բացահայտում է ժամանակի հեղափոխական մթնոլորտի գաղտնիքները:

Պալասանյանը հայ ընթերցողին ներկայացնում է ոչ միայն, կամ ոչ այնքան այդ երգերի բնագրերը, որքան պատմական ժամանակաշրջանի հերոսական պաթոսը, որի կենդանի ծնունդն էին այդ երգերը: 1848—49 թթ. հերոսական ժամանակների երգերի ամենաբնորոշ առանձնահատկությունները հոգևածագիրը համարում է «նոգեկան հափշտակությունը, անընկճելի արիությունը, հաստատուն կամփյւ և անպայման հայրենասիրությունը», առանձնահատկություններ, որոնք մարտիկներին առաջնորդում էին կռվի դաշտ:

Պալասանյանը հունգար ժողովրդի հերոսական պայքարի հնարավորությունը պայմանավորում է հայրենիքի վաղեմի փառքը վերահաստատելու ուղղությամբ Հունգարիայի գիտնականների և բանաստեղծների կեսդարյա ջանքերով: Այդ ջանքերն էին «մի անպայման վստահություն թելադրում հայրենասերներին՝ ապագայի վերաբերմամբ և մի անսահման հպարտությամբ ոգևորում նոցա», — գրում է նա: Պալասանյանը վկայակոչում է Կոշուտի «եռանդավառ պերճախոսությունը», ազգային կյանքում առաջացած վերելքը, որը երկրի քաղաքական կյանքը փոխում էր հեղափոխականի: Ստեղծվում է մի իրավիճակ, երբ հունգարացիները «փոխանակ համբերությամբ և գրավոր իրավունքների անունով հին ազատությունների գործադրությունը պահանջելու, բնական իրավունքների հիման վրա բացարձակ ազատություն էին պահանջում»:

Երկիրը մտնում է հեղափոխության ոլորտները... Պալասանյանը հիշատակում է հունգարական բանաստեղծ, հեղափոխական դեմոկրատ Շանդոր Պետեֆիի, հեղափոխության օրերի սիրված բանաստեղծներ Արանի, Գարայիի և այլ երգիչների անունները, որոնք իրենց ազատասիրական երգերով ոգեշնչում էին ժողովրդին: Նրանք ազատությունն աստվածացնում էին, ինչպես հայրենիքը, գրում է Պալասանյանը:

Չանդորադառնալով Պետեֆիի ստեղծագործությանը, քանի որ հայ ընթերցողը դեռևս «Փորձի» էջերից ծանոթ էր մեծատաղանդ այդ բանաստեղծին, հոգևածագիրը կանգ է առնում Հունգարիայի մյուս բանաստեղծների հեղափոխության տարիների ստեղծագործությունների և այն երգերի վրա, որոնք հորինել էին զինվորները մարտի բոցերում: Նրա համոզմունքով այդ երգերը ցույց էին տալիս «մի կենդանի պատկեր այն ձգտումներից, որ այնպիսի զորավոր կերպով արտահայտվեցան 1848—49-ի շարժողության ժամանակ, բայց, դժբախտաբար, անհաջող ելի ունեցան»⁴: Այնուհետև Պալասանյանը 1848—1849 թթ. հունգարական հեղափոխության պատմական իրադարձությունների ֆոնի վրա ներկայացնում է օրերի ոգին արտահայտող, մարտի դաշտում ծնված բանաստեղծությունները: Ահա 1848-ի սկզբներին ստեղծված այդօրինակ երգերից մի քանի հատված, արձակ թարգմանությամբ՝ «Ողջուն քեզ, սուրբ ազատություն, մեր գեղեցիկ նորահարս: Քեզ համար են բաբախում մեր սրտերը: Քեզ համար պատրաստ ենք տալ մեր արյունը և մեր կյանքը: ...Դու հեծեծում էիր լծի տակ, ոտնակոխ էիր եղել: Մենք խորտակեցինք քո շղթաները: Այժմ, որ

⁴ Այս արտահայտությունը «Փորձի» համար մերժված հոդվածի մի հատվածն է, որը, ի դեպ, չկար ֆրանսիական բնագրում և ավելացվել էր թարգմանչի կողմից (տե՛ս Վրացական կենտրոնական պետական արխիվ, ֆ. 480, գիրք Ա, գործ 333, գրաքննչի ղեկուցագիրը):

ձյունի նման սպիտակ ես, թուր ազատաբար, թափ տուր թեքող հաղթական դրոշի պես:

... Քո խորտակված շղթաների վրա կանգնած այս երդումն ենք անում աշուժ առաջ, հավատարիմ մնալով քեզ, ինչպես մեր անձին: Մենք նվիրում ենք քեզ հավիտյան մեր սերը և մեր սրտերը՝ Վտանգի պահին Կոշուտի ելույթները զորացնում էին մարտիկների հավատը: Պալասանյանը նշում է, որ քաղաքական, և ոչ կրոնական այս հավատն էլ մեծ կշիռ ունեցավ հունգարացոց անպայման վստահության վրա այս անհավասար կռվի սկզբնավորության ժամանակ: Հողավածագիրը մեջ է բերում բանաստեղծ Չուլոքի մի երգը, որը տոգորված էր այդ մեծ հավատով դեպի իրենց գործը («Մենք ազատ ազգ էինք, դարձյալ ազատ կլինենք»):

Ժողովրդական բանաստեղծություններից Պալասանյանը հիշատակում է հետևյալ մարտական կոչը. «Վե՛ր կաց, մաջառ, տեսե՛ք ինչպե՛ս է փայլում պատերազմի կրակը. մեր հոգին եռ է գալիս բոցավառ կրակի միջում: Ի՞նչ ավելի գեղեցիկ երազ կա մեզ համար, քան մահը գրկելը: ... Եթե հարցնեք նոր դինվոր գրվողին, թե ո՞րն է այն գերագույն բարիքը, որի համար նա պատրաստ է յուր և ուրիշների արյունը թափել, նա կպատասխանե ձեզ — ազատությունը և նա մի տարօրինակ և շարագուշակ բացատրություն կտա այդ ազատության մասին. «Դա մի արյունագույն վարդ է, որ ծաղկում է պատերազմական դաշտերի վրա»: Ավելի գեղեցիկ է բանաստեղծի հետևյալ մեկնությունը, գրում է Պալասանյանը՝ «Արձագանքի» խմբագրության հայեցակետից. «Ազատությունը մի երկնային ծաղիկ է, որ պատկանում է ազգերին. ի՞նչ գործ ունին նրա հետ թագավորներն ու կայսրերը»:

Նոյեմբերի 24, Կոշուտի զխավորած կառավարությունն արդեն հեղափոխությունն սկսել է... Ազգային բանաստեղծություններն արտացոլում են զինվորի տրամադրությունները, հունգարացի աղջիկների թախիծն ու կամքի մեծ ուժը: Նրանք չեն վհատեցնում իրենց քաջերին. «Այդ հակառակ կլինե՞ր մի երկրի ալանդությունը, — գրում է Պալասանյանը, — ուր կանայք քաջասրտությամբ միշտ հավասար են եղել այդ մարդկանց թե՛ ամուր բերդերը պաշտպանելով, ինչպես էրլավի կանայք կամ Եղիսաբեթ Լիսկոշին, թե՛ շարունակ և խաղաղ ահապահճով ազգային լեզվի ու սովորությունների սրբազան ավանդը պահպանելով»:

Վրա են հասնում ծանր ժամանակներ: 1849-ի ձմռանը հունգարացիները նահանջում են խորվաթների և ցարական բանակի առաջ, հունգարական տերիտորիան նվաճվում է և Եվրոպան վարժում է, թե ճշունդարիայի հեղափոխությունը բոլորովին անշվեցավ, ինչպես որ միևնույն ժամանակները, ճնշվել էր իտալական ապստամբությունը: Այս կարծիքը թեև ճիշտ, նկատում է Պալասանյանը, բայց անժամանակ էր. հունգարացիք այդպես շուտ անձնատուր չէին լինելու. այդ դժբախտ ժամանակի վրա քիչ երգեր կան, որովհետև հայրենասերները ավելի քիչ խոսում էին, շատ՝ ներգործում: Ամբողջ ժողովուրդը՝

5 «Արձագանք», 1892, № 17—19:

6 1848 թ. մարտի 13-ին Պետեֆին գրում է իր հռչակվոր «Ազգային երգը», որն սկսում է «Վեր կաց, մաջառ, հարկները կանչում է»՝ տողերով: Այդ երգը գաղտնի է հունգարական հեղափոխության հիմնը: Վերը հիշված «Վե՛ր կաց, մաջառ» ժողովրդական բանաստեղծությունը, հավանաբար, հորինվել էր Պետեֆի բանաստեղծության անմիջական տպավորության տակ:

երեխաներ և ծերեր. աղքատ ու հարուստ, զինվորագրվում է: Հասնելով մինչև Հունգարիայի բուն կենտրոնը, շարունակում է հողվածագիրը. «...այն Ալֆեոլդը⁷, որ այնքան անգամ երգել է Պետեֆին, ազգային գործի պաշտպանները նոր ուժեր էին ստանում ալստեդ: Կարծես թե այս արգավանդ երկիրը՝ զինվորված մարդիկ, հերոսներ ծնելու ձիրքն ունենար, որի շնորհիվ պիտի կատարվեր հպարտ Պոմպեոսի երեման հայտնած հրաշքը, այսինքն, թե բավական է երկրին ոտով խփել, որ լեզբոններ ծնվեն»:

Հունգարիայի հուսարները զարմացնում էին իրենց խիզախությամբ. դրանց առաջնորդներից մեկի, Պերշելի մասին գրված երգերը խանդավառում էին ընթերցողին (թեև, գրում է Պալստանյանը, դրանց թարգմանությունը չի կարող արտահայտել բնագրի թեթև, միանգամայն և վայրենի ներդաշնակությունը): Ահա երկու տող այդ բանաստեղծություններից. «Քամին փչում է անտառի վրա, փչում է դաշտի վրա. այդ ո՞վ է աղմկում օդը... Անշուշտ Մորիս Պերշելն է վաղ առաջին յուր ձիով»:

1894 թ. մարտի 21-ին վախճանվում է հունգարական հեղափոխության առաջնորդ Լյուդվիգ Կոշուտը: Արգար Հովհաննիսյանը ապրիլի 6-ին հրապարակում է հունգարացի գործիչ, Կոշուտի ժամանակակից Մորիս Յոկայի գրած մահախոսականը: Այն անվերապահ դրվատանքի խոսք էր՝ «ազատության հավատքի մարգարեի» հասցեին: Կոշուտի տիտանական կերպարն իր արժանի գնահատականն է ստանում իբրև հունգար ժողովրդի փառավոր մաքառման ղեկավարի, իբրև մի առաջնորդի, որի քարոզած մեծ ու վսեմ գաղափարներին՝ նվիրվել է ժամանակի ողջ սերունդը⁸: Արգար Հովհաննիսյանը «Արձագանքի» հաջորդ երկու համարներում տպագրում է իր թերթի թղթակից, հետազոտում թարգմանիչ և բանասեր Լ. Բաբայանի՝ նույն հարցին նվիրված ծավալուն հոդվածը (Լայպցիգից)⁹:

Բաբայանը Կոշուտին համարում է մի մարդ, որի անունն անմահացել է տիեզերական պատմության մեջ: Նա իր ողջ կյանքում պայքարել է «Հունգարիայի սուրբ գործի, ազատության համար»: Այնուհետև հողվածագիրն ընդգծում է մեծ գործչի հետևողականությունը, հավատարմությունը՝ ընտրած գաղափարներին, խոր ատելությունը՝ Հաբսբուրգյան տան նկատմամբ: Հունգարիայի դեմոկրատական կուսակցությունը, — գրում է Բաբայանը, — «ի դեմս Կոշուտի միշտ տեսել է երկրպագության արժանի այն մարտիրոսին և քաղաքագետ մեծ մարդուն, որի միակ նպատակը իր հայրենիքի ազատությունը և դրա ապագայում ունեցող բարելավ դրությունն է եղել»: Այս նախաբանին հաջորդում է Կոշուտի կյանքի և հեղափոխական գործունեության մանրակրկիտ պատմությունը: Հողվածն ավարտվում է դարձյալ շատ ժանրակշիռ գնահատականներով. «Կոշուտի մահով հունգարացիները կորցնում են իրենց ամենամեծ և ամենասիրելի հայրենասեր և քաղաքագետ մի անձնավորություն, որ Հունգարիայի երջանկությունը միայն նրա ազատության մեջ էր տեսնում»¹⁰:

1896 թ. մայիսին, երբ Արևմտահայաստանում անցկացվելիք բարենորոգումների հարցը լիովին ձախողված էր և հայ ժողովուրդը բնաջնջվում էր թուր-

⁷ Տեղանուն՝ Հունգարիայում:

⁸ Տե՛ս «Արձագանք», 1894, № 35:

⁹ Նույն տեղում, № 37—38:

¹⁰ Նույն տեղում, № 38:

րական կառավարության ձևերով, Աբդար Հովհաննիսյանը կրկին դիմում է հունդարական հեղափոխության օրինակին: Օգտվելով այն առիթից, որ այդ օրերին լրանում էր Հունգարիայի պետականության հազարամյակը, «Արձադանքի» խմբադրությունը պատրաստում է մի ծավալուն հոդված և ներկայացնում գրաքննության: Հոդվածը կրում էր «Հունգարիայի ազատությունը» խորագիրը: Գրաքննիչը ամեն բանից առաջ փոխում է հոդվածի վերնագիրը, այն դարձնելով՝ «Հունգարիայի հազարամյակի առթիվ», ապա որոշ փոփոխություններ մտցնելուց հետո, այնուամենայնիվ, մերժում է՝ «տեղեկացրելու» պատճառաբանությամբ¹¹:

Պետք է ենթադրել, որ Աբդար Հովհաննիսյանը շատ մեծ նշանակություն է տվել այս հոդվածին, ուստի չհաշտվելով գրաքննիչի վճռի հետ, պայքարել է նրա դեմ: «Արձագանքի» խմբագրի ջանքերը պսակվում են հաջողությամբ և մայիսի 29-ին արգելված հոդվածը հրապարակվում է սեպտեմբերի 11-ի համարում: Երկրորդ տարբերակը կրում է թերթի աշխատակից Հ. Ճաղարեկյանի ստորագրությունը, այն դեպքում, երբ առաջին տարբերակի տակ դրված էր «Սյունի» գրական կեղծանունը¹²:

Հարցադրման առումով շատ հետաքրքրական է այն երևույթը, որ թեև հոդվածը նվիրված է Հունգարիայի 1000-ամյակին, Ճաղարեկյանը այն կառուցում է՝ հենվելով միմիայն հունգար ժողովրդի ազատագրական շարժումների և գերազանցապես 1848—49 թթ. հեղափոխության փաստերի վրա: «Կեկավար սկզբունքը, որով սկսվում է հոդվածը, հանգում է այն մտքին, թե «Մարդկային կյանքի մեջ չկա դրություն, որ հավիտենական լինի»: Հունգարիան հիսուն տարի առաջ տառապում էր, իսկ այժմ հասել է խաղաղ հանգրվանի... Հոգավածագիրը վերջիշում է 1848 թ. իրադարձությունները: Հայ ընթերցողին անհրաժեշտ էր հաղորդակից դարձնել Հունգարիայի մոտավոր անցյալի այն փոթորկահույզ մթնոլորտին, երբ ողջ ժողովրդին առաջնորդում էր ազգային մեծ երգիչ՝ Վերեշմարտիի հրաշալի «Կոչը»: Այն մեջ է բերվում ամբողջությամբ...

«Անդամաճան սե՛ր և համատարմություն պահպանիր դեպի հայրենիք, մաջա՛ռ, նա՛ է քո օրրանը. նա է քո գերեզմանը. նա ծնում, փայփայում է քեզ, և երբ մեռնում ես, լուր գիրկն է առնում:

...Այս այն երկիրն է, ուր այնքան հաճախ թափվել է քո նախնյաց արյունը. այս այն երկիրն է, որի վրա հանդշում են հազարավոր տարիների հիշատակները:

...Ազատություն, քո դրոշակն այստեղ շատ է ծածանել և քեզ համար մղած կովի մեջ այստեղ ընկել են մեր հայրենիքի լա՛վ լա՛վ որդիքը:

¹¹ Վրացական կենտրոնական պետական արխիվ, ֆ. 480, գիրք լրացուցիչ Ա, գործ № 179:

¹² Հակոբ Ճաղարեկյանը ավարտել է Շուշվա թեմական դպրոցը և 1881—1896 թ. մանկավարժական աշխատանք կատարել տեղի դպրոցներում: Նա միաժամանակ ղեղավել է գրական և թարգմանական աշխատանքով: Առանձին գրքերով հրատարակել է «Սասունցի Դավիթ», «Տեսություն բանահյուսության», «Վահան Մամիկոնյան ըստ Ղազար Փարպեցու» ուսումնասիրությունները, «Մայրենի լեզու» և «Հայոց պատմություն» ձեռնարկները և այլն:

Ճաղարեկյանը 1885-ից աշխատակցել է «Աղբյուր», ավելի ուշ՝ «Նոր-դար» և «Լուսա» պարբերականներին: 1895-ից անընդմեջ աշխատակցում էր «Արձագանքին»: Վախճանվել է 1900-ին, 36 տարեկան հասակում:

Եվ շնայելով խիստ ճակատագրի այդ հարվածներին, թեպետ խոնարհած, բայց չես խորտակված, այլ կենդանի ևս, մեր ազգ թանկագին:

Կենդանի է նա և նա՛ կանչում է ամբողջ աշխարհին՝ «տասնյակ դարերի իմ տանջանքները խնդրում, պահանջում են կյանք և կամ մահ»:

Անկարելի է: Լոկ այն պատճառով, որ անեծքի տակ է մեր երկիրն այժմ, կարող չէ ընկճվել այս հպարտ հոգին, այս շքնած ուժը, այսքան անլրդով այս արիությունը:

Ձէ՛, պետք է գան, հասնին և անշուշտ կգան լավագույն օրեր, այդ են աղերսում, օ՛հ այրվող թախիծով այդ են աղերսում բյուրավոր լեզուք:

Թե չե՛ կգա, կհասնի, ինչպես սահմանն է ճակատագրի— արյունհեղություն, մահվան մեծ օրը, երբ հայրենիքը յուր գիրկը կառնի նահատակ ազգի սառն դիակը:

Եվ ազգ ու ազինք մահացած ազգի շիրմին կնայեն. շատ միլիոն աչքեր վշտի արցունքով կողողվին, կայրվին:

Ուրեմն, մաջառ, ջերմ սիրով սիրիր քո հայրենիքը, որ քեզ պահպանում է և երբ մեռնում ես, յուր գիրկն է առնում:

Երկրագնդի ամբողջ երեսին չկա մի այլ տեղ, որ վրադ նայեր այնքան հաճույքով. այստե՛ղ մարտնչիր ճակատագրիդ դեմ. այստեղ պիտ ապրես և այստեղ մեռնես»¹³:

Ժամանակի ոգին գրգռում, հուզում էր հունգարացիների ազգային զգացմունքները, գրում է Ճաղարբեկյանը: Ֆրանսիական հեղափոխությունը, հավասարության և ազատության կրակոտ քարոզներն ու պահանջները չէին կարող նրանց վրա ազդեցություն չունենալ: Հուզվում էր և Խտալիան ու իր որդիներին վրեժի կոչում... Կոշուտը և Պետեֆին նախապատրաստում էին հունգարական ապստամբությունը: Այնուհետև «Արձագանքի» աշխատակիցը ներկայացնում է այդ երկու գործիչներին, նրանց, որոնք աներկյուղ գլխավորեցին հեղափոխական շարժումը: «Կոշուտը յուր հայրենիքի մեծ սարդն է. նա մարմնացած հայրենասիրություն էր. նա նուրբ քաղաքագետ էր և խիզախ գործիչ: Պատահարների և փորձությանց դեմ աննկուն՝ որպես քարաժայռ, մրրիկների ժամին՝ անվրդով, անայլայլ, նպատակին դիմելիս՝ արագ ու անվրեպ, որպես լարից արձակված նետը և ճակատագրի ու շարության դեմ՝ ամպրոպ ու իշխում էր Հունգարիայի մտքի վրա. նա էր ուղղություն տալիս ամենի քայլերին:

Ուրիշ էր Պետեֆին: Նա ևս մարմնացած հայրենասիրություն էր: Բայց յուր ռազմական ու մարզարեական երգերով ազդում էր յուր հայրենակիցների զգացմունքների վրա, թե ու թուրք էր տալիս նրանց հայրենասիրությունը: Քաղաքներում ու գյուղերում, երիտասարդ ու ծեր, այր ու կին, զշխո և աղախին նրա երգերն էին երգում: Եվ 1848—49 թվականների հունգարացի ավստրիական դորաց թնդանոթների առջևը՝ կանգնած՝ նրա երգերովն էր ոգևորվում»¹⁴:

Ճաղարբեկյանը ամբողջությամբ մեջ է բերում Պետեֆիի «Իմ խնդրած մահը» բանաստեղծությունը (որը հրապարակվել էր «Փորձի» 1876 թ. 2-րդ համարում) և ապացուցում նրա ազգային ոգին: Ինչո՞ւ է Պետեֆին երազում մեռ-

¹³ «Արձագանք», 1896, № 100:

¹⁴ Նույն տեղում:

նել մարտի դաշտում... Սկստորիան մաջարներին երկաթի կլանք էր միայն շնորհում,— բացատրում է իր հայ ընթերցողներին հողվածագիրը։— Մետեր-նիխի բաղաբականությունը ձգտում էր ոստիկանական միջոցներով ճնշել ազ-դերի հոգին, մեռցնել ամեն մի ազատական ձգտումն։ Պետեֆին, նրա հետ և հունգարական ամբողջ ազգը, տեսնում է, որ այդ խաղաղ մահը չէ յուր բա-ժինը»¹⁵,

Հողվածագիրը հանգամանորեն պատմում է հունգարական հեղափոխու-թյան ընթացքը, վերելքն ու պարտությունը հանգամանքները։ Ճաղարբեկյանը հողվածն ավարտում է իր ընթերցողներին ուղղված մի խորհմաստ հետևու-թյամբ. պարտությունից հետո՝ Հունգարիան ընկճված էր, բայց ո՛չ խորտակ-ված։ Ե՛նա կենդանի էր. նա դեռ երդում էր պատերազմի դաշտում գնդակի համ-րույրով մահացած Պետեֆիի երգերը։ Այդ դեպքերից տասը տարի անց, իրե-րի սլատական ընթացքը ստեղծում է Ավստրո-Հունգարական միացյալ պետու-թյունը։ Հունգարիան անկախություն է ստանում, գրում է Ճաղարբեկյանը, և նա այսօր աշխարհին «ուզում է ցույց տալ, թե ո՛րպիսի բաբեբաբ ազդեցու-թյուն է ունեցել այն վիճակը, որ Հունգարիան ձեռք է բերել յուր ընտիր որդեցը զոհելով» (ընդգծումը մերն է— Մ. Մ.)։

Սա, հարկավ, ծրագիր էր հայության համար. Արևմտահայաստանը կոր-ծանվում էր՝ ինչպես ժամանակին Հունգարիան։ Հունգարիան ազատագրվեց՝ «յուր ընտիր որդեցը զոհելով»։ Ի՞նչ ճանապարհ պետք է ընտրեն հայերը. մի բան պարզ էր. «Արձագանքի» հրապարակախոսները այդ ճանապարհը արդեն անցառում էին դիվանագիտական դավադիր խաչուղիներից։

Սակայն, դարավերջին վիճակը ծանրացել էր և Արևելյան Հայաստանում։ 1896 թ., երբ Աբգ. Հովհաննիսյանը պայքարի գնով «Արձագանքում» զետե-ղում է «Հունգարիայի հաղարամյակը» հողվածը, ցարիզմը վերջնականապես փակել էր հայկական դպրոցները և հետապնդում էր ազգային մշակութային հիմնարկների գործունեությունը։ Մետերնիխի անվան հիշատակությունը, թե նա «ձգտում էր ոստիկանական միջոցներով ճնշել ազգերի հոգին, մեռցնել ամեն մի ազատական ձգտումն» հասցեագրված էր ցարիզմին¹⁶։

Հունգարիայի ազգային-ազատագրական պայքարի օրինակներով իր արև-մուտահայ ընթերցողներին դաստիարակելուն զուգընթաց, Աբգար Հովհաննիս-յանը 80—90-ական թթ. նորանոր հնարներ է որոնում արժարժեքի և արևելա-հայերին հուզող մեծ խնդիրները։ Նա կրկին դիմում է եվրոպական ժողովուրդ-ների պատմության օգնությանը և ազգային լեզվի պահպանման ու ժողովրդ-գին ազգային ինքնաճանաչության հասցնելու ծրագիրը լուսաբանում է գլխա-վորսույն չին ժողովրդի պայքարի համանման դրվագների վկայակոչումով¹⁷։

¹⁵ Նույն տեղում։

¹⁶ Հատկանշական է, որ դեռևս անցյալ դարի 60-ական թվականներին Չերնիշևսկին և Դորրոլյուրովը ցարիզմի քաղաքականությունը քննադատելու համար դիմում էին ավստրիա-կան իրականության փաստերին, քանի որ ժամանակի եվրոպական երկրների մեջ ամենից ավելի ավստրիական բռնապետական ուժերն էին համապատասխանում ցարական Ռուսաստանում իշ-խող քաղաքական ուժերին։

¹⁷ Այս հարցին մենք անդրադարձել ենք «Չին ժողովրդի ազատազրական պայքարի արտացոլումը հայ մամուլի էջերում» հաղորդման մեջ (տե՛ս «Էրաբեր հասարակական գիտու-թյուններ», 1966, № 9)։

ОТРАЖЕНИЕ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОГО
ДВИЖЕНИЯ ВЕНГРИИ НА СТРАНИЦАХ «ПОРДЗА»
И «АРДЗАГАНКА»

М. А. МХИТАРЯН

Р е з ю м е

В последней четверти XIX в., когда армянский вопрос становится основной темой армянской периодической печати, все чаще появляются статьи, посвященные истории и освободительной борьбе Балканских стран, Венгрии и Чехословакии.

Большую инициативу в популяризации данного вопроса проявлял Абгар Иоаннисян, редактор журнала «Пордз» (1876—1881) и газеты «Ардзаганк» (1882—1898). С особой симпатией Иоаннисян освещал историю венгерской революции 1848—49 гг. В своих периодических изданиях он напечатал 10 стихотворений Шандора Петефи. В 1892 г. Иоаннисян в «Ардзаганке» поместил весьма серьезную статью Ст. Паласяна «Венгерская национальная поэзия времен войны 1848—49 гг.». Автор статьи на фоне героических событий 1848—49 гг. знакомит своих читателей с произведениями Петефи, Араня, Гараи, Чучора, а также с народными песнями, созданными в годы революции.

В связи со смертью Л. Кошута в «Ардзаганке» было помещено несколько статей, в которых отмечались великие заслуги Кошута именно как вождя венгерской революции.

В 1896 г. в «Ардзаганке» была напечатана обстоятельная статья под заглавием: «По поводу тысячелетия Венгрии». Эта статья, как и предыдущие, минуя цензурные препятствия, в основном была построена на материалах освободительной борьбы венгерского народа.

На примерах национально-освободительной борьбы венгерского народа армянские деятели старались воспитывать свой народ, помочь становлению его национального самосознания, организовать силы для борьбы против турецкого ига.